



Ֆ. ՆԱՆՍԵՆԻ ՀՈՒՇԱՄԵԴԱԸ՝ ՍԱՄՎԵԼ ՃՁՄԱՅԱՆԻՆ

08.07.2014



Այդ օրը ՀԲՄ-ի հյուրն էր «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամի նախագահ Ֆելիքս Բախչինյանը: Նշված կազմակերպության գլխավոր նպատակներից մեկն է հայկական հողում մեծ նորվեգացու հիշատակի հավերժացումը: Ֆ. Նանսենի անվան հիմնադրամը ստեղծվել է 1995թ-ին Նիկոլայ Ռիժկովի նախաձեռնությամբ և հետագայում տեղափոխվել է Հայաստան...

Հայտնի է, որ Ֆ. Նանսենը (1861-1930) բարձրաձայն դատապարտել է հայերի նկատմամբ Արդուլ Համիդ II և երիտթուրքերի գազանաբար կատարված զանգվածային կոտորածները՝ Մեծ եղեռնը: Ցեղասպանության տարիներին Նանսենն ակտիվ գործունեություն ծավալեց, որպեսզի փրկի հայ փախստականներին, ինչի արդյունքում 320 հազ. փախստական ստացան «Նանսենյան անձնագրեր», որոնք էապես թեթևացրեցին նրանց հետագա ճակատագիրը տասնյակ երկրներում: Ավելի ուշ մեծ հումանիստը Հայաստանի մասին գիրք գրեց: «Արդյո՞ք կա ամբողջ աշխարհում մի այլ ժողովուրդ, որը նույնչափ տանջվեց և չվերացավ»՝ սրանք Նանսենի խոսքերն են: Հրատարակվեց «Խաբված ժողովուրդ» գիրքը, որը նա գրել էր Հայաստան կատարած իր ճանապարհորդության հետքերով: Նանսենը ոտնատակ տվեց ամբողջ աշխարհը, բոլոր տեղերում հնչեցնելով հայ ժողովրդին օգնելու կոչը: 1928թ-ին նա այցելեց Ամերիկա, որտեղ հայերի օգտին գումարներ հավաքագրելու նպատակով դասախոսություններ էր կարդում: Նրան շատ բան հաջողվեց անել

տասնյակ հազար հայերի պատմական հայրենիք վերադառնալու գործում: Եվ չնայած այդ ամենին, ինչպես վկայում է նրա դուստր Լիվ Հեյրե-Նանսենը, մեծ նորվեգացին, նույնիսկ լինելով արդեն անբուժելի հիվանդ, քննադատում էր ինքն իրեն այն բանի համար, որ կարող էր հայերի համար անել ավելին: Նա կյանքից հեռացավ «հայ» բառը շուրթերին...

ՀԲՄ-ի գրասենյակում Ֆ. Բախչինյանը ևս մեկ անգամ հիշեցրեց ներկաներին Ֆ. Նանսենի փառապանծ ուղին, պատմեց Հայաստանում հիմնադրամի գործունեության մասին: Մասնավորապես, հիմնադրամի նախաձեռնությամբ հայերենով հրատարակվել են Նանսենի գրական աշխատանքները: Բայց հիմնադրամի գործունեությունը դրանով չի սահմանափակվում: Հայաստանի մի շարք քաղաքներում կան Ֆ. Նանսենի անվան փողոցներ և դպրոցներ: Գյումրիում կա Նանսենի անվան մանկատուն, իսկ մայրաքաղաքի Նոր Նորք համայնքում՝ այգի, որտեղ տեղադրված է «Նանսենյան անձնագրի» հուշարձանը: Նորվեգիայի Կարմիր խաչի նախաձեռնությամբ երկրաշարժից տուժած Սպիտակում կառուցվել է հիվանդանոց, որի բացմանը ներկա էր Ֆ. Նանսենի թոռը՝ հայտնի ճարտարապետ Էյգիլ Նանսենը: Հայաստանում մեծ շուքով տոնել են մեծ նորվեգացու 150-ամյակը:

... Իսկ հետաքրքիր շփման վերջում ՀԲՄ-ի նախագահ Սամվել Ճզմաչյանին հաճելի անակնկալ էր սպասում: Ֆ. Բախչինյանը հայտարարեց, որ հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է ընդունել մարդասիրության համար պարգևատրել նրան Ֆ. Նանսենի հուշամեդալով: Իր պատասխան խոսքում Ս. Ճզմաչյանը շնորհակալություն հայտնեց հիմնադրամի նախագահին իր կյանքի և գործունեության բարձր և մի քիչ էլ անսպասելի գնահատականի համար:



ԹԵՃ ԳԻՕՐ ԿԱՊԱՍԱՌԵՑՆԻ ՀԱՇԻՎՆԵՐԸ

22.07.2014



Քաղաքացիների ահազանգերը վարչական տույժերի, այդ թվում ճանապարհային երթևեկության կանոնների խախտման, չվճարման համար իրենց հաշիվների սառեցման դեպքերի վերաբերյալ այսուհետ քննարկելու է միջգերատեսչական աշխատանքային խումբը, որը բաղկացած է ՀՀ արդարադատության նախարարության, ոստիկանության և կենտրոնական բանկի ներկայացուցիչներից: Աշխատանքային խմբի հետ կարելի է կապվել Արդարադատության

նախարարության թեժ գծի հեռախոսահամարով՝ (010) 31-91-74:

Դրա հետ կապված հիշեցնենք, որ 16.07.2014թ. Հայաստանի բանկերի միությունը հանդես էր եկել հատուկ հայտարարությամբ, որտեղ մասնավորապես ասվում էր՝ «Բանկերը մշտապես եղել են և կան կառավարության կողմից իրականացվող ծրագրերի և գործառույթների իրականացման համար լավագույն գործընկերներից մեկը, մշտապես իրենց վրա կրել են սոցիալական պատասխանատվություն և իրենց նպաստն են ունեցել տարատեսակ սոցիալական ծրագրերի իրականացմանը: Այս դեպքում ևս բանկերը պատրաստակամ են ԴԱՀԿ-ին օգնելու իր գործառույթը կատարելու համար: Սակայն, կարիք կա օրենքի նախագծում բազմակողմանի անդրադարձ կատարել նաև բանկերի կողմից բարձրացվող խնդիրներին... Ակնհայտ է, որ այս գործառույթը որևէ կապ չունի բանկերի հիմնական գործունեության հետ, սակայն այն իրականացնելու համար բանկերից պահանջվում է մարդկային, ծրագրային և ֆինանսական մեծ ռեսուրսներ:»



ԱԿԲԱ-ԲԱՆԿԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՏԱՆ ՄԱՆԵՐԻՆ

30.06.2014



ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ-ը, «Հայաստան» Համահայկական հիմնադրամն ու «Վորլդ Վիժն Հայաստան»-ի գրասենյակն ստորագրել են եռակողմ ծրագրի շուրջ համագործակցության համաձայնագիր, որով կրթական նոր հնարավորություններ կստեղծվի Գավառի մանկատան սաների համար:

Ծրագրի շրջանակներում Գավառի մանկատան 9-18 տարեկան ավելի

քան 90 սան հնարավորություն կունենա ստանալ խորացված հանրակրթական և մասնագիտական գիտելիքներ:

Ծրագիրը մաս է կազմում ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ-ի և «Հայաստան» Համահայկական հիմնադրամի կողմից թողարկված Visa «ԲԱՐԵՐԱՐ» բարեգործական քարտի ծրագրին: Բանկն արդեն թողարկել է 19 000 Visa «ԲԱՐԵՐԱՐ» քարտ, իսկ փետրվարին ամենաակտիվ 1000 քարտապանների միջև անցկացրած հարցման արդյունքում առաջարկվող ծրագրերից ընտրվել է մանկատաների երեխաների համար կրթական կենտրոնի ստեղծումը:

Առաջին բարեգործական ծրագրի արժեքը 41 մլն դրամ է, որը, ըստ ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ

ԱԳՐԻԿՈՆԸ ԲԱՆԿԻ գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանի, հետագայում կարող է ավելանալ: Ծրագրի տևողությունը 3 տարի է:

«Ծրագրին կարող են մասնակցել Visa «ԲԱՐԵՐԱՐ»-ի բոլոր քարտապանները: Անհրաժեշտ գումարը ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆԸ ԲԱՆԿ-ը փոխանցում է իր միջոցների հաշվին՝ ամեն մի քարտի վճարման 0.3%-ը կուղղվի այդ ֆոնդին, բանկն էլ կարող է անմիջական մասնակցություն ունենալ և փոխանցումներ կատարել այս նպատակի համար»,- ասել է Անդրեասյանը:

«Հայաստանի տարբեր քաղաքների ու գյուղերի ավելի քան 90 երեխա այժմ սովորում է Գավառի մանկատանը, ովքեր հաճախում են դպրոց, մասնակցում արտադասարանային խմբակների, սակայն ստացած գիտելիքները բավարար չեն, որ չափահաս դառնալու և մանկատունը լքելու դեպքում այդ երեխաները կարողանան աշխատանք գտնել և լիարժեք ինտեգրվել հասարակությանը»,- ասել է «Վորլդ Վիժն Հայաստանի» գրասենյակի տնօրեն Ժիրայր Էդիլյանը:

«Հայաստան» Համահայկական հիմնադրամի տնօրեն Արա Վարդանյանը նկատել է. «Տարիների փորձը ցույց է տալիս, որ միայն շինարարություն անելով և կահավորելով՝ բոլոր խնդիրները չէ, որ լուծում են ստանում: Ծրագրի արդյունքում՝ մի քանի տարի անց, մենք կունենանք զարգացած երեխաներ, որոնք ճիշտ կկողմնորոշվեն իրենց ապագայի հարցում»:

ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ «ԱՆԿԱՆԽԻԿ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ»

02.07.2014



Ս.թ. հուլիսի 2-ից մինչև սեպտեմբերի 30-ը Ամերիաբանկն անց է կացնում «Անկանխիկ ազատություն» ակցիան: Նոր առաջարկության հիմնական գաղափարն է վարկային գծերի տրամադրումը հաճախորդին ոչ թե նրա եկամուտների, այլ անկանխիկ ծախսերի հիման վրա: Ինչպես այդ առիթով նշեց բանկի զարգացման գծով տնօրեն Տիգրան Զրբաշյանը,

ծախսերն ավելի իրատեսական են բնութագրում մարդու վճարունակությունը:

Քարտապանները կարող են օգտվել նոր ծառայությունից այն պայմանով, որ վերջին կես տարվա ընթացքում քարտով ամենամսյա անկանխիկ շրջանառությունը լինի 80 հազ. դրամից ոչ պակաս: Այդ դեպքում բանկի կողմից տրամադրվող վարկային գիծը կկազմի 150 հազարից մինչև 1,5 մլն դրամ: Վարկի տրամադրման ամբողջ գործընթացը հաճախորդի համար կլինի առավելագույնս հարմար, որովհետև բանկի կողմից որոշման ընդունումը կհիմնվի հաճախորդի ծախսերի վերլուծության վրա, և ոչ մի լրացուցիչ փաստաթղթեր, այդ թվում և եկամուտների մասին տեղեկանք, չի պահանջվի:

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»՝ ՀԱՍՏԱՏՈՂ ԲԱՆԿ

07.07.2014



Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի (ՎՋԵԲ) կողմից «Առևտրի ֆինանսավորման ծրագրի» շրջանակներում Արմավիսբանկին շնորհվել է հաստատող Բանկի կարգավիճակ: Այս մասին համաձայնագիրն այսօր ստորագրել են ՎՋԵԲ Երևանյան գրասենյակի տնօրեն Մարկ Դեյվիսը և Արմավիսբանկի գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյանը:

«Նոր կարգավիճակում Արմավիսբանկը կհաստատի արտասահմանյան բանկերի կողմից թողարկվող ակրեդիտիվները և երաշխիքները՝ արտահանողների համար առավել հասանելի դարձնելով առևտրի ֆինանսավորման գործիքների կիրառումը»,- ասել է Գևորգ Մաչանյանը:

«Այս համաձայնագրով ՎՋԵԲ-ն իր որոշ գործառույթներ վստահում է Արմավիսբանկին: Մեր համագործակցությունը սկսվել է դեռ 2010-ին և ակտիվ շարունակվում է»,- նշել է Մարկ Դեյվիսը:



ՎՏԲ-Ի «ՍՈՒՊԵՐՄԱՐԿ»

11.07.2014



ՎՏԲ-Հայաստան Բանկն իր բարեխիղճ հաճախորդների համար մշակել է հատուկ առաջարկ՝ «Սուպերդրույք», որի շրջանակում ապառիկ վարկավորման ողջ գումարի մարումից հետո բանկը վերադարձնում է վարկառուին վճարված տոկոսների ընդհանուր գումարի 10%: Այժմ բանկի հաճախորդները կարող են ձևակերպել ապառիկ առևտրի 700 կետերում առանց կանխավճարի՝ սկսած տարեկան 10% տոկոսադրույքից, կատարել ամենամսյա վճարումներ ինչպես հարկն է և վարկի ամբողջական մարումից հետո ետ ստանալ վարկի համար վճարած տոկոսների 10%:

«Վարկի տրամադրման մասին որոշումն ընդունվում է հաշված րոպեների ընթացքում, վարկը ձևակերպվում է տեղում, և դրա համար պահանջվում է փաստաթղթերի նվազագույն փաթեթ՝ անձը հաստատող փաստաթուղթ և հանրային

ծառայությունների համարանիշ (սոցիալական քարտ)», - նշված է բանկի հաղորդագրության մեջ:

«Սուպերդրոյք» առաջարկը համատեղում է ցանկալի պրոդուկտը կամ ծառայությունը ստանալու ու ֆինանսական ռեսուրսների կուտակման և պահպանման հնարավորությունները: ՎՏԲ-Հայաստան Բանկը ձգտում է խրախուսել իր բարեխիղճ հաճախորդներին՝ վերադարձնելով նրանց ապառիկ վարկավորման շրջանակում վճարված գումարի մի մասը: Այս առաջարկի առանցքային մասը հաճախորդի հեռատեսությունն է, ինչը նրան հնարավորություն է տալիս տոկոսագումարը խնայելու՝ ետ ստանալով վճարված տոկոսագումարների 10%-ը այն պայմանով, որ ամենամյա վճարումները կատարվել են բարեխիղճորեն», - նշել է ՎՏԲ-Հայաստան Բանկի Գլխավոր տնօրեն-Տնօրինության նախագահ Յուրի Գուսևը:



ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿԸ ՆՎԱԶԵՑՆՈՒՄ Է ԴՐՈՒՑՔՆԵՐԸ

11.07.2014



Արդշինինվեստբանկը նվազեցնում է ֆիզիկական անձանց ոսկյա իրերի գրավով ապահովված սպառողական վարկերի և Nur Card Express վարկային գծերի տարեկան տոկոսադրույքները: Մասնավորապես, սկսած 2014 թ.-նի հուլիսի 15-ից ոսկյա իրերի գրավով ապահովված սպառողական վարկերը գրեթե բոլոր մասնաճյուղերում կտրամադրվեն

միջինում 1% ցածր տոկոսադրույքով: Իսկ 500 հազար դրամը գերազանցող Nur Card Express վարկային գծերի տոկոսադրույքները՝ սկսած 2014թ.-նի օգոստոսի 18-ից, ինքնաշխատ կերպով կնվազեցվեն 4.1%-ով:

«Ավանդաբար լինելով ՀՀ բանկային համակարգում մանրածախ ծառայություններ մատուցող առաջատար բանկերից՝ մենք մշտապես ձգտում ենք մեր հաճախորդներին մատուցել բարձրորակ և մրցունակ ծառայություններ: Ներկայումս ակտիվ աշխատանքներ են տարվում նաև բանկում գործող այլ սպառողական վարկերի տոկոսադրույքների նվազեցման և առավել հարմարավետ ծառայությունների ներդրման ուղղությամբ:

Արդշինինվեստբանկի ոսկյա իրերի գրավով ապահովված վարկերի բարեխիղճ վարկառուներին, սկսած վարկի գործողության առաջին իսկ ամսից, առաջարկվում են լրացուցիչ մինչև 1 միլիոն դրամ վարկեր, առանց գրավի ավելացման: Իսկ հուլիսի 15-ից ուժի մեջ կմտնի նաև Nur Card Gold Express վարկատեսակը, որը հնարավորություն կընձեռի ստանալ մինչև 1 մլն 200 հազար դրամ և համարժեք ԱՄՆ դոլար վարկային գծեր համապատասխանաբար 17.9% և 14.9% տարեկան տոկոսադրույքներով», - նշել է Արդշինինվեստբանկի Մանրածախ բիզնեսի տնօրեն Արթուր Գյուլազյանը:



ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ \$10 ՄԼՆ Է ՆԵՐԳՐԱՎԵԼ OFID-ԻՑ

16.07.2014

ARARATBANK 

Արարատբանկը փոքր և միջին ձեռնարկություններին վարկավորելու նպատակով \$10 մլն է ներգրավել The OPEC Fund for International Development (OFID) ֆինանսական կազմակերպությունից: Ինչպես հայտնել են Արարատբանում, վարկային պայմանագրի շրջանակներում բանկը կտրամադրի մինչև \$ 500 000 սահմանաչափով

վարկեր արտադրության, սպասարկման, առևտրի և գյուղատնտեսության ոլորտներում գործունեություն ծավալող ՓՄՁ-ներին:

Շրջանառու միջոցների համալրման, կապիտալ ներդրումների, հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով վարկերը կտրամադրվեն մինչև 4 տարի մարման ժամկետով՝ 10-11% դրույքաչափով:

Պայմանագիրը ստորագրել են Նավթարդյունահանող երկրների կազմակերպության (OPEC) Միջազգային զարգացման հիմնադրամի (OFID) գլխավոր տնօրեն Սուլեյման Ջազիր Ալ Հերբիշը և «Արարատբանկ» ԲԲԸ վարչության նախագահ Աշոտ Օսիպյանը:

OFID-ի հետ սա բանկի համագործակցության առաջին ծրագիրն է: Համագործակցության մեկնարկը Ալ Հերբիշը բացատրել է այն փաստով, որ Արարատբանկը Հայաստանում ՓՄՁ վարկավորման ոլորտի խոշոր խաղացողներից է և մասնաճյուղային լայն ցանցի առկայության շնորհիվ կապահովի ֆինանսական հոսքերի հասանելիություն մարզերում գործող ՓՄՁ-ների համար:

Աշոտ Օսիպյանը, իր հերթին, բարձր է գնահատել կազմակերպության օժանդակությունը Հայաստանում փոքր և միջին բիզնեսի զարգացման հարցում: Նա վստահեցրել է, որ Արարատբանկի հետ OFID-ի համագործակցությունը կողմերի համար կլինի ոչ միայն արդյունավետ, այլև շարունակական:

OFID-ը զարգացման ֆինանսական գործակալություն է, որը հիմնադրվել է 1976 թ-ին OPEC-ի անդամ երկրների կողմից և ֆինանսական աջակցություն է տրամադրում OPEC-ի անդամ չհանդիսացող երկրներին: OFID-ը մասնավոր հատվածի և առևտրի ֆինանսավորման ծրագրերի շրջանակում ընդհանուր առմամբ \$ 42 մլն-ի չափով ֆինանսավորում է տրամադրել հայաստանյան 4 բանկերի և հասարակական հատվածում ներգրավված 4 ծրագրերի՝ երկրի տնտեսության տարբեր ոլորտներում ՓՄՁ վարկավորման նպատակով:

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միություն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,
- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ uba@uba.am: